Ֆիզիկական անձանց բանկային կամ առարկայազուրկ մետաղական հաշվի բացման փաստաթղթերի ցանկ

1. **<u>ՀՀ քաղաքացի հանդիսացող ՀՀ ռեզիդենտ</u>**

1.1. Հաշիվ բացելու դիմում-պայմանագիր.
1.2. Անձը հաստատող փաստաթուղթ.
1.3. Հանրային ծառայության համարանիշ (սոցիալական քարտ) կամ վերջինս չունենալու մասին տեղեկանք (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում չի պահանջվում).
1.4. Ռեզիդենտի «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ (KYC):

2. **<u>ՀՀ քաղաքացի չհանդիսացող ՀՀ ռեզիդենտ</u>**

2.1 Հետևյալ փաստաթղթերից մեկը՝
2.1.1 օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիրը,
2.1.2 ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված),
2.1.3 կացության վկայական,
2.1.4 ՀՀ հատուկ կարգավիճակի անձնագիր:

Եթե հաճախորդը ներկայացնում է միայն 2.1.1 կամ 2.1.2 ենթակետերում նշված փաստաթղթերը, ապա ռեզիդենտության հաստատման համար հաճախորդը պետք է նաև ներկայացնի 2.1.3 կամ 2.1.4 կամ 2.3 կետերի փաստաթղթերը:
Եթե հաճախորդի մոտ առկա են 2.1 կետում նշված փաստաթղթերից մի քանիսը, ապա բոլորն ընդունվում են Բանկի կողմից:

2.2 Հանրային ծառայության համարանիշ (սոցիալական քարտ) կամ վերջինս չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում, պարտադիր է միայն, եթե որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացվում է կացության վկայական կամ ՀՀ հատուկ կարգավիճակի անձնագիր).
2.3 կացության վկայականի կամ ՀՀ հատուկ կարգավիճակի անձնագրի բացակայության դեպքում հետևյալներից մեկը՝
2.3.1 առնվազն 3 ամիս ժամկետով անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ վավերացված նոտարական կարգով,
2.3.2 փաստացի բնակության վայրի վերաբերյալ տեղեկանք,
2.3.3 աշխատավայրից տեղեկանք կամ աշխատանքային պայմանագիր կամ սեփական բիզնես գործունեության փաստաթուղթ:
2.4 Ռեզիդենտի «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ (KYC):

3. **<u>Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝</u>**

3.1 Անձը հաստատող փաստաթուղթ.
3.2 Ոչ Ռեզիդենտի «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ (KYC):

4. **Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:**

Ծանուցում 1.
Անձը հաստատող փաստաթուղթը ներկայացվում է բնօրինակը, Բանկում մնում է պատճենը:

Ոչ ռեզիդենտների դեպքում բոլոր օտարալեզու փաստաթղթերը ներկայացվում են հյուպատոսական կամ նոտարական վավերացմամբ՝ ապոստիլով վավերացված (եթե այլ կարգ նախատեսված չէ ՀՀ միջազգային համաձայնագրերով) և հայերեն թարգմանությամբ (նույնականացման փաստաթղթերի (անձնագրի և այլն) նոտարական վավերացմամբ հայերեն լեզվով թարգմանությունը պարտադիր չէ ռուսերեն լեզվով ներկայացված փաստաթղթերի համար, որը կարող է պահանջվել ըստ անվան/ազգանվան բարդության) : Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Փոդերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարգով» սահմանված այլ փաստաթղթեր: